ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 18.02.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-02/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-02/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 29.01.2014թ. և 01.02.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-02/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 29.01.2014թ. ներկայացված բողոքով «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն հայտնել է, որ 22.01.2014թ. «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ը, թատրոնի տարածքների լիակատար մաքրման ծառայությունների գնման նպատակով՝ հայտարարել է թիվ «ՕԲԹ-ՊԸԾՁԲ 14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգ: Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտերի բացումը տեղի է ունեցել Պատվիրատուի շենքում, ՀՀ, ք. Երևան, Թումանյան 54 հասցեում, ժամը 12:00-ին:

«Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն գտնում է, որ Պատվիրատուի կողմից անցկացված ընթացակարգի ընթացքում խախտվել են ՀՀ օրենսդրության պահանջները, ինչպես նաև չեն պահպանվել հրավերի պահանջները, հետևյալ հիմնավորմամբ.

1. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի՝ հրավերի 7.2.1 ենթակետի հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Հայտերի բացման ժամանակ հանձնաժողովի անդամների քանակը բաղկացած է եղել չորս հոգուց: Հայտերը բացել և ներկայացրել է Սուրեն Աղաբաբյանը, ով հանդիսանում է «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրենը: «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն՝ ստանալով հայտերի բացման արդյունքների արձանագրությունը, պարզել է, որ Սուրեն Աղաբաբյանը ընդգրկված չի եղել գնահատող հանձնաժողովի կազմում, սակայն արձանագրությունը ստորագրած անդամների քանակը չորսն են եղել, որտեղից պարզ է դարձել, որ արձանագրությունը ստորագրած անդամներից մեկը ընդհանրապես ներկա չի գտնվել հայտերի բացմանը, սակայն ստորագրել է արձանագրությունը:

2. «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն հայտնել է, որ Հրավերի 1-ին գլխի 2.3 ենթակետի «Աշխատանքային ռեսուրսներ» ենթաբաժնի համաձայն՝ աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները, որոնց համաձայն աշխատողների մասնագիտական միջին ստաժը կկազմի ոչ պակաս, քան երեք տարի: Նույն կետի 2-րդ ենթակետով Մասնակցի որակավորումը այդ չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն մասով նախատեսված պահանջները, մինչդեռ «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել աշխատողների աշխատանքային գրքույկների պատճենները, որի առկայության դեպքում միայն հնարավոր կլիներ պարզելու աշխատողների մասնագիտական միջին ստաժը, որը պետք է պակաս չլիներ երեք տարուց, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից կազմված արձանագրության մեջ, «Քլինլայն» ՍՊԸ-ի «աշխատանքային ռեսուրսներ» կետը գնահատվել է բավարար:

3. Հրավերի 1-ին գլխի 2.3 ենթակետի «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է բավարար, եթե մասնակիցը Պատվիրատուին ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը

գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ցանկ, թե ում հետ է կնքվել նմանատիպ պայմանագրեր վերջին երեք տարիների ընթացքում, սակայն նշված մասնակցի կողմից չի ներկայացվել դրանց սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումները: Գնահատող հանձնաժողովի կողմից կազմված արձանագրության մեջ, «Քլինլայն» ՍՊԸ-ի «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» կետը ևս գնահատվել է բավարար:

4. Հրավերի 2-րդ մասի 2.2.8 ենթակետի համաձայն՝ գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Հիշատակված հավելվածում նշվում է կնքվելիք պայմանագրի ընդհանուր գինը (և հարկը), ինչը պարզ է դառնում նշված հավելվածը ուղղակի ընթերցելիս: Բացի այդ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168 որոշման 56-րդ կետի համաձայն, եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով: Այդ հավելվածում մասնակից «Քլինլայն» ՍՊԸ-ն ներկայացրել է ամսական գումար, որը ևս չի համապատասխանում հրավերի և հիշատակված իրավական ակտերի պահանջներին:

«Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն 01.02.2014թ. ներկայացված բողոքի լրացումով հայտնել է, որ հրավերի 6.1 կետով մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1. հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից,

2. խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

3. հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Հայտի ապահովման տրամադրման պահանջը պատվիրատուին անհրաժեշտ է ապահովելու իր շահերը հնարավոր հաղթողի կողմից պարտականությունների չկատարման համար: «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման չափը ներկայացվել է իր առաջարկի ամսական գումարի 2 տոկոսից մի փոքր ավելի չափով, ինչը չի ապահովում հայտի իրական արժեքը: Բացի այդ, հանձնաժողովը՝ ընդունելով «Քլինլայն» ՍՊԸ-ի այդ առաջարկը, խախտել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված գնումների մասնակցելու հավասարության սկզբունքը:

«Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն գտնում է, որ «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ դրա ապահովման մասով ևս չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն խնդրել է՝ կասեցնել ՕԲԹ-ՊԸԾՁԲ 14/8 ծածկագրով գնումների ընթացակարգի ընթացքում հանձնաժողովի կողմից 23.01.2014թ. կայացրած թիվ 3 որոշման (արձանագրության) կատարումը, մինչև խորհրդի համապատասխան որոշման կայացումը, «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ճանաչել անբավարար և որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից հաղթող ճանաչել «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ին:

2. «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 31.01.2014թ. N 04/032-95 գրությամբ դիմել է «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 29.01.2014թ. և 01.02.2014թ. «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ը 03.02.2014թ. N 02/33 գրությամբ հայտնել է հետևյալը.

1. Հանձնաժողովի չորս անդամներից մեկը ծրարների բացման փուլում աշխատանքային այլ հարցով որոշակի ժամանակով բացակայել է այն սենյակից, որտեղ բացվել են հայտերը, ինչը չի նշանակում, որ հետո առանց հայտատուների ներկայության

հանձնաժողովի քննարկման-ամփոփմանը չի մասնակցել, չի ծանոթացել հայտերին, որից հետո միայն ստորագրել համապատասխան արձանագրությունը:

2. Նախկինում կատարված աշխատանքների պայմանագրերի պատճենների շարքում, փաթեթում առկա են պայմանագրերին համապատասխան ընդունման-հանձնման բազմաթիվ ակտեր, որոնցում արտացոլված են տվյալ պայմանագրերի մասով պատշաճ և լիարժեք կատարման փաստեր:

Բացի այդ, «Քլինլայն» ՍՊԸ-ի հետ թատրոնը աշխատանքային շփում է ունեցել 2013թ. վերանորոգումից հետո, երբ նրանց է հանձնարարված եղել շատ կարճ ժամկետում կարգի բերել թատրոնի նախասրահը, ճեմասրահը, դահլիճը, բեմական տարածքները և այլն, որը կատարվել է գրագետ, որակով և ճիշտ ժամանակին:

3. «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում առկա են եղել՝ հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին (նմանատիպ պայմանագրերի 187.764.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով), հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին, հայտարարություն հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների մասին, որտեղից պարզ երևում է, որ աշխատակիցները ունեն նվազագույնը երեք տարվա աշխատանքային որակավորում:

4. Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ փաթեթը ընդունվել է ծառայության մատուցման համար ամսեկան կտրվածքի գումարային առաջարկով, պատճառն այն է, որ ՊՈԱԿ-ի 2014 թվականի ֆինանսական նախահաշիվը կազմման և հաստատման փուլում է, այսինքն «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ը դեռ լիովին չի տիրապետում տարեկան ֆինանսական միջոցներին, ուստի ընթացակարգը հայտարարվել է պայմանով, մինչև տվյալ հարցերի լիարժեք ճշտումը:

<u>3. ԳԲԽ-02/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 29.01.2014թ. և 01.02.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից թատրոնի տարածքների լիակատար մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-

14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1.3 կետով «Քլինլայն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, իսկ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին բողոքով ներկայացված պահանջը մերժել:

4. ԳԲԽ-02/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-02/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի 29.01.2014թ. և 01.02.2014թ ներկայացրած բողոքը, «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր), գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 22.01.2014թ. կայացած նիստի N 2 և 23.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 3 արձանագրությունները, «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին ներկայացված 03.02.2014թ. N 02/33 գրությունը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից թատրոնի տարածքների լիակատար մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Հարթս», «Բի Էլ Գրուպ» և «Քլինլայն» ՍՊԸ-ները:

1. «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն 29.01.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքով հայտնել է, որ «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերի բացման ժամանակ հանձնաժողովի անդամների քանակը բաղկացած է եղել չորս անձից: Հայտերը բացել և ներկայացրել է Սուրեն Աղաբաբյանը, ով հանդիսանում է «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրենը: «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն՝ ստանալով հայտերի բացման արդյունքների արձանագրությունը, պարզել է, որ Սուրեն Աղաբաբյանը ընդգրկված չի եղել գնահատող հանձնաժողովի կազմում, սակայն արձանագրությունը ստորագրած անդամների քանակը չորսն են եղել, որտեղից

պարզ է դարձել, որ արձանագրությունը ստորագրած անդամներից մեկը ընդհանրապես ներկա չի գտնվել հայտերի բացմանը, սակայն ստորագրել է արձանագրությունը:

Պատվիրատուն 03.02.2014թ. N 02/33 գրությամբ հայտնել է, որ հանձնաժողովի չորս անդամներից մեկը ծրարների բացման փուլում աշխատանքային այլ հարցով որոշակի ժամանակով բացակայել է այն սենյակից, որտեղ բացվել են հայտերը, սակայն հետո մասնակցել է հանձնաժողովի քննարկման-ամփոփմանը և ստորագրել է համապատասխան արձանագրությունը:

1-ին կետի վերաբերյալ.

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2014թ. կայացած նիստի N 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ տվյալ նիստին մասնակցել են հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սեմիզյանը, հանձնաժողովի անդամ Ռ. Սեդրակյանը և հանձնաժողովի քարտուղար Մ. Ղևոնդյանը, իսկ հանձնաժողովի անդամ Է. Շամյանը բացակայել է, սակայն արձանագրությունը ստորագրվել է հանձնաժողովի նախագահ Մ. Սեմիզյանի, հանձնաժողովի անդամներ Ռ. Սեդրակյանի, Է. Շամյանի և հանձնաժողովի քարտուղար Մ. Ղևոնդյանի կողմից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունը ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 35-րդ կետի՝

- 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կազմավորվում է, դրա վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման առաջարկը ներկայացվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Գնահատող հանձնաժողովը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, ովքեր նշանակվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով,
- 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Հայտերի բացման նիստն

իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի քարտուղարը և հանձնաժողովի առնվազն մեկ անդամ,

- 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստերը սղագրվում (կամ տեսաձայնագրվում կամ ձայնագրվում) և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ խախտվել են Օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասով և Կարգի 35-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ Հանձնաժողովի 22.01.2014թ. կայացած նիստի N 2 արձանագրությունը ստորագրվել է նաև տվյալ նիստին բացակայող հանձնաժողովի անդամ Է. Շամյանի կողմից:

2. «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել աշխատողների աշխատանքային գրքույկների պատճենները, որոնց առկայության դեպքում միայն հնարավոր կլիներ պարզելու աշխատողների մասնագիտական միջին ստաժը, որը պետք է պակաս չլիներ երեք տարուց, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից «Քլինլայն» ՍՊԸ-ի «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը գնահատվել է բավարար:

Պատվիրատուն 03.02.2014թ. N 02/33 գրությամբ հայտնել է, որ «Քլին Լայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում առկա են եղել՝ հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին, հայտարարություն հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների մասին, որտեղից պարզ երևում է, որ աշխատակիցները ունեն նվազագույնը երեք տարվա աշխատանքային որակավորում:

2-րդ կետի վերաբերյալ.

«Քլինլայն» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի N 3.4 հավելվածով՝ աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը՝ ներկայացնելով պայմանագրի կատարման համար հիմնական աշխատակազմում ներառված թվով 12 մասնագետների վերաբերյալ տեղեկանք, որտեղ նշվել են վերջիններիս անունները, ազգանունները, որակավորումները՝ վիտրաժ լվացող, հավաքարար, աշխատանքային փորձը՝ ժամանակահատվածը՝ 2010 և 2011թթ-ից, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ վիտրաժների լվացում դժվար

հասանելի հատվածներում, մաքրման աշխատանքներ, գործատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները՝ «Քլինլայն» ՍՊԸ, հեռ. 010-53-62-68, ինչպես նաև ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ մատուցվող ծառայությանը վերջիններիս ներգրավվելու մասին և անձնագրերի պատճենները:

Հանձնաժողովի 23.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1.1 կետով որոշում է կայացվել «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով գնահատել բավարար:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 84-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով նախատեսված «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. հրավերով պահանջվում է, որ մասնակիցն իր հայտով ներկայացնի հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին,

2. եթե հրավերով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով սահմանված են համապատասխան պահանջներ, ապա՝

ա. հրավերով պահանջվում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է պայմանագրի կատարման համար մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները,

բ. աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների

անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները,

3. մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանվել է, որ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.4) պայմանագրի կատարման համար նույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ կցելով պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների անունը, ազգանունը, որակավորումը, աշխատանքային փորձը՝ ժամանակահատվածը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը, գործատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները:

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները, որոնց համաձայն աշխատողների մասնագիտական միջին ստաժը պետք է կազմի ոչ պակաս, քան երեք տարի:

2. Մասնակցի որակավորումը այդ չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն մասով նախատեսված պահանջները:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերով «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով հստակ չեն սահմանվել Կարգի 84-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ մասնակցի հիմնական աշխատակազմին՝ աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը)ներկայացվող ներկայացվողպահանջները, հետևաբար «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցի կողմից ներկայացված պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին հայտարարությունը բավարար կլիներ մասնակցի հայտը այդ չափանիշի մասով գնահատելու համար:

3. «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն հայտնել է, որ Հրավերի 1-ին գլխի 2.3 ենթակետի «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է բավարար, եթե մասնակիցը Պատվիրատուին ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է վերջին երեք տարիների ընթացքում կնքված նմանատիպ պայմանագրերի ցանկ, սակայն նշված մասնակցի կողմից չեն ներկայացվել դրանց սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումները և Հանձնաժողովի կողմից «Քլինլայն» ՍՊԸ-ի «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվել է բավարար:

Պատվիրատուն 03.02.2014թ. N 02/33 գրությամբ հայտնել է, որ «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախկինում կատարված աշխատանքների պայմանագրերի պատճենների շարքում առկա են պայմանագրերին համապատասխան ընդունման-հանձնման բազմաթիվ ակտեր, որոնցում արտացոլված են տվյալ պայմանագրերի մասով պատշաճ և լիարժեք կատարման փաստեր, ինչպես նաև «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաթեթում առկա է հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին՝ նմանատիպ պայմանագրերի 187.764.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

3-րդ կետի վերաբերյալ.

«Քլինլայն» ՍՊԸ-ն «ՕԲԹ-ՊԸԾՁԲ 14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի N 3.1 հավելվածով, ներկայացրել է պայմանագրով նախատեսված գործունեությանը մասնագիտական գործունեության մասին տեղեկանք, որտեղ նշվել է հետևյալը.

- 2011 թվականի ընթացքում կատարած պայմանագրերի առարկան՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ, ծավալը՝ գումարային արտահայտությամբ՝ 8.400.000 ՀՀ դրամ, Պատվիրատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները՝ պատասխանատու անձ Գ. Թադևոսյան, (+37498) 55-15-01, առարկան՝ «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ (ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ), ծավալը՝ գումարային արտահայտությամբ՝ 4.824.000

ՀՀ դրամ, Պատվիրատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները՝ պատասխանատու անձ՝ Ն. Հակոբյան, (+37494) 00-78-89 և այլն:

- 2012 թվականի ընթացքում կատարած պայմանագրերի առարկան՝ «Երևանջուր» ՓԲԸ, ծավալը՝ գումարային արտահայտությամբ՝ 22.800.000 ՀՀ դրամ, Պատվիրատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները՝ պատասխանատու անձ՝ Ա. Պետրոսյան, (+37494) 63-55-43, առարկան՝ «Արմսվիսբանկ» ՓԲԸ, ծավալը՝ գումարային արտահայտությամբ՝ 8.400.000 ՀՀ դրամ, Պատվիրատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները՝ պատասխանատու անձ՝ Գ. Թադևոսյան, (+37498) 55-15-01 և այլն:
- 2013 թվականի ընթացքում կատարած աշխատանքների առարկան՝ «Երևանջուր» ՓԲԸ, ծավալը՝ գումարային արտահայտությամբ՝ 46.080.000 ՀՀ դրամ, Պատվիրատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները՝ պատասխանատու անձ՝ Ա. Պետրոսյան, (+37494) 63-55-43, առարկան՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, ծավալը՝ գումարային արտահայտությամբ 17.726.000 ՀՀ դրամ, պատասխանատու անձ՝ Տ. Աղեկյան, (+37499) 91-05-50 և այլն:
- 2014 թվականի ընթացքում կատարած պայմանագրերի առարկան՝ «Երևանջուր» ՓԲԸ, ծավալը՝ գումարային արտահայտությամբ՝ 3.840.000 ՀՀ դրամ, Պատվիրատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները՝ պատասխանատու անձ՝ Ա. Պետրոսյան, (+37494) 63-55-43, առարկան՝ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ, ծավալը՝ գումարային արտահայտությամբ 8.863.000 ՀՀ դրամ, պատասխանատու անձ՝ Տ. Աղեկյան, (+37499) 91-05-50 և այլն:

Հանձնաժողովի 23.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1.1 կետով որոշում է կայացվել «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշի մասով գնահատել բավարար:

Հրավերի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը մասին տեղեկանքով, «Քլինլայն» ՍՊԸ-ն հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է

ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

Կարգի 80-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է նախկինում կատարված պայմանագրերի առարկայի, ծավալի՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ), պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալների մասին տեղեկություններ,

2. Մասնակիցը համարվում է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանվել է, որ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1. Մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները՝ նախկինում կատարված պայմանագրերի առարկան, ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պատվիրատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները,

2. Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման (նմանատիպ) ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Նմանատիպ են համարվում տարածքների մաքրման ծառայությունների մատուցումը:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով Հրավերով նախատեսված «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված

գործունեությանը» որակավորման չափանիշին բավարարելու համար հայտով ներկայացված պայմանագրով նախատեսված գործունեությանը մասնագիտական գործունեության համապատասխանության մասին տեղեկանքը չի բավարարում Կարգի 80-րդ և Հրավերի 2.3 կետերով սահմանված պահանջներին, քանի որ տեղեկանքով որպես նախկինում կատարված պայմանագրերի առարկաներ են նշվել տվյալ պայմանագրի կողմ հանդիսացող Պատվիրատուների անվանումները, իսկ Հանձնաժողովի կողմից՝ «Քլինլայն» ՍՊԸ-ին չի ընձեռնվել նշված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն և վերջինիս հայտը «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշի մասով գնահատվել է բավարար, ինչի արդյունքում խախտվել են Կարգի 75-րդ կետով, 80-րդ կետի 3-րդ ենթակետով և Հրավերի 2.3 կետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի 29.01.2014թ. բողոքով ներկայացրած այն պնդմանը, որի համաձայն «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է բավարար, եթե մասնակիցը Պատվիրատուին ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ապա գտնում ենք, որ «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշին բավարարելու համար հրավերով, ինչպես նաև գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նման պահանջ նախատեսված չէ:

4. «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն հայտնել է, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168 որոշման 56-րդ կետի համաձայն, եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով, մինչդեռ «Քլինլայն» ՍՊԸ-ն ներկայացրել է ամսական գումար, որը չի համապատասխանում հրավերի և հիշատակված իրավական ակտի պահանջներին:

Պատվիրատուն 03.02.2014թ. N 02/33 գրությամբ հայտնել է, որ «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտով ներկայացված գնային առաջարկը ընդունվել է ծառայության մատուցման համար ամսական կտրվածքի գումարային առաջարկով, այն

պատճառաբանությամբ, որ ՊՈԱԿ-ի 2014 թվականի ֆինանսական նախահաշիվը կազմման և հաստատման փուլում է, այսինքն, «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ը դեռ լիովին չի տիրապետում տարեկան ֆինանսական միջոցներին, ուստի ընթացակարգը հայտարարվել է պայմանով, մինչև տվյալ հարցերի լիարժեք ճշտումը:

4-րդ կետի վերաբերյալ.

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի N 4 հավելվածով՝ գնային առաջարկով, սահմանվել է, որ գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ ձևով՝ ապրանքի անվանումը, արժեքը, ԱԱՀ-ն, առաջարկված գինը տառերով և թվերով:

«Քլինլայն» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկում նշվել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ընկերությունն առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով՝ արժեք 1.170.000 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 234.000 ՀՀ դրամ, առաջարկված գինը՝ 1.404.000 ՀՀ դրամ ամսական:

Հանձնաժողովի 23.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1.3-րդ կետով հանձնաժողովը որոշում է կայացրել ընտրված մասնակից ճանաչել «Քլինլայն» ՍՊԸ-ին:

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, նույն օրենքով սահմանված կարգով, կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել: Նույն մասը կարող է կիրառվել եթե՝

1. պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը,

2. ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու

պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով: Պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են պայմանագրի կնքման օրվանից հաշված մինչև մեկ, իսկ ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում:

Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի կողմից «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկը բավարար գնահատելու արդյունքում խախտվել է Կարգի 56-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ գնային առաջարկը ներկայացվել է Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող ծառայության միավորի արժեքով՝ գնման ենթակա ծառայության ամսական գումարով:

5. «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ն 01.02.2014թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ հրավերի 6.1 կետով մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից, սակայն «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման չափը ներկայացվել է իր առաջարկի ամսական գումարի 2 տոկոսից մի փոքր ավելի չափով, ինչը չի ապահովում հայտի իրական արժեքը:

5-րդ կետի վերաբերյալ.

«Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի Հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող գնման ժամանակացույցով գնման ենթակա ծառայության մատուցման ժամկետը սահմանվել է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 31.12.2014թ.:

«Քլինլայն» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով՝ Հրավերի N 4 հավելվածով ներկայացրած գնային առաջարկով պայմանագիրը առաջարկել է կատարել ամսական 1.404.000 ՀՀ դրամ գումարով, իսկ Հրավերի N 7 հավելվածով ներկայացված տուժանքի մասին համաձայնության 1.1.1 կետով սահմանվել է, որ «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից տարածքների մաքրման ծառայությունների ձեռքբերման «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ 40.000 ՀՀ դրամ գումարի չափով:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Հրավերի 6.1 կետով մասնակիցը հայտով՝ նույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

«Քլինլայն» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացրած գնային առաջարկի և հայտի ապահովում հանդիսացող տուժանքի մասին համաձայնության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ընկերության կողմից հայտի ապահովումով նշված 40.000 ՀՀ դրամը չի ապահովում վերջինիս կողմից պայմանագրի կատարման համար առաջարկվող գնի երկու տոկոսը, քանի որ պայմանագրի կատարման ժամկետը սահմանված է մինչև 31.12.2014թ., իսկ Ընկերության կողմից առաջարկված 1.404.000 ՀՀ դրամը չի հանդիսանում պայմանագրի կատարման ընդհանուր գումարը, որովհետև առաջարկված գինը ներկայացվել է Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող ծառայության միավորի արժեքով՝ ամսեկան մատուցման համար, որի արդյունքում խախտվել է Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով և Հրավերի 6.1 կետով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովն է որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Տ

1. «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 29.01.2014թ. և 01.02.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» ՊՈԱԿ-ի կողմից թատրոնի տարածքների լիակատար մաքրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՕԲԹ-ՊԸԾՁԲ-14/8» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2014թ. ժամը 15:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1.2 կետով «Քլինլայն» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումը:

3. Որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «Բի Էլ Գրուպ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին 29.01.2014թ. և 01.02.2014թ. բողոքով ներկայացված պահանջը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գոռ Ենոքյան

Անդամ՝ Սուսաննա Աղաջանյան